

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվար 2022թ.

Հիմք ընդունելով Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդի 09.08.2018թ. և 22.03.2019թ. որոշումները և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 2020 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-172-Ն օրենքի դրույթները՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

Սահմանել, որ.

1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 09.08.2018թ. և 22.03.2019թ. որոշումները տարածվում են նաև այն դեպքերի վրա, երբ Զինձառայողների կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով:

2. Եթե հաշվարկվում է հատուցման գումարը մարտական գործողությունների հետևանքով զինձառայողի առողջությանը պատճառված վնասի դեպքում՝ ապա Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 09.08.2018թ. և 22.03.2019թ. որոշումների 4-րդ կետերում նշված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում վճարվող ընդհանուր գումարում հաշվառվում են.

1) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա զինծառայողին նշանակված զինվորական հաշմանդամության կենսաթոշակի գումարը,

2) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետով զինծառայողին նշանակված պարգևավճարի գումարը,

3) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով զինվորական հաշմանդամության կենսաթոշակ ստանալու հիմքով զինծառայողին նշանակված գումարները:

3. Եթե հաշվարկվում է հատուցման գումարը մարտական գործողությունների հետևանքով զինծառայողի կյանքին պատճառված վնասի դեպքում՝ ապա Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 09.08.2018թ. և 22.03.2019թ. որոշումների 4-րդ կետերում նշված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում վճարվող ընդհանուր գումարում հաշվառվում են.

1) շահառու համարվող անձին (Զինծառայողի ընտանիքի անդամին) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիման վրա նշանակված զինվորական կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի գումարը,

2) շահառու համարվող անձին (Զինծառայողի ընտանիքի անդամին) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով, 8-րդ կետով նշանակված պարգևավճարների գումարները,

3) շահառու համարվող անձին (Զինծառայողի ընտանիքին) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի

հիման վրա ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետով նշանակված պարզևավճարի գումարը,

4) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով զինվորական կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու հիմքով զինծառայողին նշանակված գումարները:

4. Սույն որոշման հիման վրա զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման գումարները վերահաշվարկվում են 2022 թվականի հունվարի 1-ից՝ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից **Հիմնադրամին տրամադրված տվյալները:**

5. Մինչև սույն որոշման հիման վրա զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման գումարները վերահաշվարկելը շահառուներին Հիմնադրամից ավել վճարված գումարները համարվում են հիմնադրամի ծախս, եթե այդ գումարները ավել են վճարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում վճարվող գումարների չափերի մասին տեղեկությունների բացակայությամբ (այդ թվում՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 09.08.2018թ. որոշման 10-րդ և 22.03.2019թ. որոշման 8-րդ կետերի հիման վրա Հիմնադրամին տվյալներ չտրամադրելու պատճառով):